2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՏԱՐԻ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՕՂԱԿ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Ժողովուրդների հոգեկան աշխարհին խորթ, նրանց բարեկամական հարաբերություններին վնաս հասցնող ամեն մի դրսեւորման դեմ պայքարելու համար, Թումանյանն իր հրապարակախոսության հիմքում դրել է ազգերի փոխճանաչման հարցը: Իսկ փոխադարձաբար ճանաչելու համար չափազանց կարեւոր է միմյանց մշակույթներին հաղորդակից լինելը՝ թարգմանության, դասախոսությունների եւ այլնի միջոցով: Նա ոչ միայն անձամբ ուսումնասիրել է վրաց գրականությունն ու արվեստը եւ իր գիտելիքներն ի սպաս դրել վրաց մշակույթի քարոզչությանը, այլեւ ամեն կերպ աշխատում էր ամրապնդել փոխադարձաբար միմյանց ճանաչելու անհրաժեշտության գիտակցումը: Այդ նպատակով նա հայ գրողների ընկերության միջոցով կազմակերպում էր վրաց գրականությանը նվիրված երեկույթներ, ուր հանդես էր գալիս զեկուցումներով:

Խորը հայրենասիրությունը չխանգարեց Թումանյանին սիրել նաեւ հարեւան ժողովրդի հայրենիքը:

Նրա սերը դեպի վրաց ժողովուրդը սրտաբուխ էր ու շիտակ: Մեծ մարդասերը վստահեցնում է. «...Հավատացած եղեք, որ ամենալավ վրացու հետ ես կմրցեմ դեպի Վրաստանը տածած իմ անկեղծ ու խոր սիրով»: Ամենայն Հայոց բանաստեղծը չթուլացող հետաքրքրություն է ցուցաբերել վրաց արվեստի ու գրականության նկատմամբ: Հատկապես կարեւորել է գրականության դերը՝ որպես ժողովուրդների միջեւ կապի «ամենավսեմ» միջոցներից մեկը: Իր հարկի տակ հաճախ է հյուրընկալել վրաց գրչակիցներին, մտորել գրականության, արվեստի, Կովկասի ժողովուրդների ճակատագրի շուրջ: Ուշադրությամբ հետեւել է վրաց մշակույթի զարգացմանը եւ ակտիվորեն մասնակցել բոլոր հիշարժան միջոցառումներին ու տոնակատարություններին, ձգտել է խորամուխ լինել վրաց ժողովրդի կյանքի բոլոր մանրամասների մեջ: Այս առումով ուշագրավ է հետեւյալ փաստը. 1893թ.-ի ապրիլի 25-ին վրաց հասարակայնությունը Գանձակից Թիֆլիս էր տեղափոխում բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլու աճյունը: «Այստեղ էին հավաքվել վրաց ժողովրդի արժանի զավակները՝ Ի.Ճավճավաձեն, Ա.Ծերեթելին, Գ.Ծերեթելին եւ ուրիշներ,- գրում է այդ առթիվ Վասիլ Իմեդաձեն:- Նրանց հետ էր նաեւ մի հայ երիտասարդ: Նա էլ էր եկել իր հարգանքը մատուցելու եղբայրական ազգի անմահ բանաստեղծի անվանը եւ հիշատակին: Դա թեւերը նոր տարածած ապագայի արծիվ, հայ ազգի երգիչ Հովհաննես Թումանյանն էր: Ահա սկսվեց սգո հանդիսավոր մասը: Ամբողջ ժողովրդի հետ Թումանյանը եւս ծնկի եկավ մեծավայելուչ դագաղի առաջ: Ելույթ ունեցան վրաց մշակույթի հսկաներ Իլյան եւ Ակակին: Նրանց հետ մեկտեղ հուզիչ խոսք է արտասանում երիտասարդ հայ բանաստեղծ Հովհ.Թումանյանը: Դա հայ ժողովրդի ձայնն էր՝ լի հարգանքով ու սիրով եղբայրական վրաց ժողովրդի, նրա պարծանքի՝ Ն.Բարաթաշվիլու նկատմամբ: Այսպես ճանաչեց Վրաստանը իր հավատարիմ բարեկամին՝ երիտասարդ Հովհ.Թումանյանին»:

Բացի գրական երեկույթներից, անձնական կապերից ու ծանոթություններից, Թումանյանը մեծ կարեւորություն էր տալիս թարգմանական գործին: Նա գտնում էր, որ այդ ճանապարհով ժողովուրդները կարող են ավելի մոտիկից իրար ճանաչել ու խորացնել փոխադարձ բարեկամական հարաբերությունները: Ճիշտ է, Թումանյանը վրաց գրականությունից շատ քիչ է թարգմանել, հայտնի են 1907 թվականին Ի.Ճավճավաձեի մահվան առիթով նրա «Գարուն», «Էլեգիա» բանաստեղծությունների հիանալի թարգմանությունը, սակայն Թումանյանը հայ գրողներին խրախուսել է զբաղվել թարգմանությամբ:

Մեծ արվեստագետը շատ բարձր է գնահատել այն գրողներին, որոնք իրենց ստեղծագործությամբ նպաստել են հայ եւ վրաց ժողովուրդների մերձեցմանը: Այս իմաստով նա բացառիկ նշանակություն է տվել Սայաթ-Նովային եւ մեծապես օժանդակել է Իոսեբ Գրիշաշվիլու՝ «Սայաթ-Նովա» մենագրության ու վրացերեն երգերի գրքույկի հրատարակմանը:

Վրաց հասարակության հետաքրքրությունը Հովհաննես Թումանյանի երկերի հանդեպ սկսվում է 19-րդ դարի 90-ական թվականներից: Այս հետաքրքրությունը պայմանավորված էր գրողի ստեղծագործական բազմազանությամբ ու մեծ մարդասիրությամբ: 1908 թվականին «Նակադուլի» (Առվակ) մանկական ամսագրում տպագրվել է «Սուտասանը», իսկ 1911-ին «Ջեջիլ»(Նորածիլ հացահատիկի արտ) ամսագրում՝ «Բարեկենդանը» (երկուսի թարգմանիչն էլ Ղ.Կարապետյանն էր):

«Վրաց պոետներն ու գրողները առանձնակի ակնածանքով էին վերաբերվում հայրիկին: Երբ նրա հետ անցնում էինք Դվարցովայա փողոցով (այսօրվա Ռուսթավելի պողոտայով, (խմբգ.), վրացիները հեռվից տեսնելով նրան, մոտենում էին, կանգնում, ողջունում. “Привет Арарату!”: Իսկ երբ մեր տան մոտովն էին անցնում, գիշեր լիներ թե ցերեկ, հայրիկին դուրս էին կանչում պատշգամբ, ողջունում էին, մի ջերմ խոսք ասում՝ անցնում կամ ուղղակի բարձրանում էին տուն, իրեն մոտ»,- հիշում է Նվարդ Թումանյանը:

Թումանյանին վրացերենով թարգմանելու գործում մեծ ավանդ ունի հանրաճանաչ Իոսեբ Գրիշաշվիլին: Նա 1924 թվականին Թբիլիսիում հրատարակել է բանաստեղծի ստեղծագործությունների հատընտիրը:

1953թ. երեւանյան «Գրական թերթում» Հովհ. Թումանյանի կյանքի ու գործունեության մասին ծավալուն հոդված է գրել հայտնի վրաց գրականագետ Ալ.Բարամիձեն: Նա հոդվածում արժեւորել է Հայաստանը՝ որպես հին եւ մեծ մշակույթի երկիր, իսկ հայ հին եւ նոր գրականությունների առաջնային անունը Հովհաննես Թումանյանն է:

Վրաց հասարակությունը մեծ ուշադրությամբ եւ առանձնակի հարգանքով էր վերաբերվում հայ բանաստեղծին, հավատում նրա անկեղծությանն ու բարձր գնահատում մեծ մտածողի դերը երկու դրկից ազգերի դարավոր բարեկամության ամրապնդման գործում՝ նրան իրավամբ ընդունելով իբրեւ իր բանաստեղծը եւս: Վրաց հանճարեղ քնարերգու Տիցիան Տաբիձեն Հովհ.Թումանյանին նվիրված «Պոետների երազանքը» բանաստեղծության մեջ նրան համարել է հարեւան ժողովուրդների եղբայրական միասնությունը, ազնիվ ձգտումները մարմնավորող. «Հովհաննես Թումանյանը մեր ժամանակների փառահեղ անհատականություններից էր: Այդ լուսավոր էակն իրեն ճանաչողների բարեկամն էր մնում ամբողջ կյանքում»,- գրում է Տաբիձեն:

Թումանյանի մահը խորապես սգացել է վրաց ժողովուրդը: Վրաց գործիչներն ու ստեղծագործողները հարգանքի բազմաթիվ խոսքեր են հղել ու ներբողներ հյուսել՝ Սամսոն Փիրցխալավայի բնորոշմամբ՝ «հայ ժողովրդի վեհանձնագույն զավակի եւ վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամի» մահվան կապակցությամբ: Մեջբերենք վրաց անվանի գրող, դրամատուրգ, արվեստաբան Գրիգոլ Ռոբաքիձեի (1880-1962թթ.) «Ռուբիկոնի» շաբաթաթերթի 1923 թվականի ապրիլի 8-ի համարում զետեղված՝ «Հովհաննես Լուսեղեն» վերնագրով հուշերից մի հատված. «...Շատ մեծ է մեր վիշտը, որովհետեւ Հովհաննեսը Մարդ էր: Հովհաննեսը Բանաստեղծ էր: Հովհաննեսը Բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն...»:

Տիցիան Տաբիձեի այրին՝ Նինո Տաբիձեն բանաստեղծի մահվան առիթով փաստում է. «...Հուղարկավորությունը վերածվեց մի վիթխարի ցույցի: Ես չեմ հիշում այլ մի դեպք, երբ տարբեր ժողովուրդների բանաստեղծները որեւէ մեկին ճանապարհ դնեին այդքան անկեղծ, այդքան ջերմ զգացմունքներով»:

Մեծ պոետին, մարդկային լավագույն հատկանիշներով օժտված հայրենասեր քաղաքացուն, իր կտակի համաձայն, հուղարկավորեցին այն քաղաքում, որի հետ կապված էր հոգու հազար ու մի թելերով: Եվ, հիրավի, այդ Լուսեղեն անհատի մահվամբ չսպառվեց այն մեծ սերը, որ դրսեւորում էր նա սեփական ժողովրդի ու եղբայր վրաց ազգի հանդեպ: Այսօր էլ Խոջիվանքի բարձունքից նա շարունակում է անսահման լույս ու սեր սփռել իր երկու հայրենիքների վրա:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի կուլտուրայի, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ***

ՆՈՐ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարանի նախաձեռնությամբ եւ Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանի աջակցությամբ, Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանում տեղի ունեցավ վիրահայ գրող, բանաստեղծ, հասարակական գործիչ Վիկտոր Հովսեփյանի «Նանե', նանե', կրա'կ տուր ինձ» գրքի շնորհանդեսը:*


Հուշանկար. Շնորհանդեսի մասնակիցները Երեւանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի պատշգամբում

Գիրքը ամփոփում է Վիկտոր Հովսեփյանի (1947-1996թթ.) տպագրված եւ անտիպ մանկական ստեղծագործությունները: Գիրքը հրատարակվել է Վիկտոր Հովսեփյանի տիկնոջ՝ Թերեզա Հովսեփյանի նախաձեռնությամբ եւ զավակների միջոցներով: Ժողովածուն հեղինակի թվով 16-րդ գիրքն է, որոնցից 7-ը լույս են տեսել ետմահու:

Շնորհանդեսին, ողջունելով հյուրերին եւ շնորհավորելով նոր մանկական գրքի ծնունդը, ելույթներով հանդես եկան թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը, բանաստեղծի դուստրը՝ Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարանի ֆոնդապահ Գիսանե Հովսեփյանը, ՎԳՄ «Վերնատուն» միության նախագահ, Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախք» կենտրոնի ղեկավար, բանաստեղծ Ժորա Սնխչյանը, Համահայկական գրողների միության նախագահ Աբգար Ափինյանը, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանը եւ ուրիշներ:

Արձակագիր Մկրտիչ Սարգսյանի որդին՝ Վահագն Սարգսյանը, Վիկտոր Հովսեփյանի թանգարանին փոխանցեց երիտասարդ Վիկտորի՝ Մկրտիչ Սարգսյանին հասցեագրած նամակների պատճենները, որոնք տեղ են գտել Մ.Սարգսյանի ետմահու տպագրված նամականու մեջ:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցավ Վիկտոր Հովսեփյանի մորեղբոր որդին, մանկության ընկերն ու համադասարանցին, բժիշկ, բանաստեղծ Մկրտիչ Գրաբսկին, բանաստեղծ Ալեքսան Գոմցյանը:

Ելույթներով հանդես եկան Հայաստանի ԿԳՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գուրջինյանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, որը իր ելույթից հետո «Հովհաննես Թումանյան 150» մեդալներ փոխանցեց Անի Եղիազարյանին եւ Սերգո Երիցյանին:

***ՍԵԴԱ ԱԲՈՎՅԱՆ***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

# ՄԻԱՅՆ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ

***Նկարում տեսնում եք ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում ապրող եւ սովորող Ջավախեթիի զավակներից մեկին՝ Սարգիս Դուրգարյանին:***

***Ծանոթ ազգանուն է, այնպե՞ս չէ: Չեք սխալվում: Միայն թե մենք ծանոթ ենք նրա պապին՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձայի թիվ 2 հանրային դպրոցի տնօրեն Սարգիս Դուրգարյանին:***



Այսօր սերունդների արժանի հերթափոխ է տեղի ունենում: Բայց դեռ վաղ է, եւ ժամանակը շարժվում է առաջ: Այս անգամ ներկայացնում ենք Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության բաժնի մագիստրատուրայի ուսանող Սարգիս Դուրգարյանին:

Այնքան էլ երկար ժամանակ չի անցել, երբ Սարգիս-կրտսերը ավարտեց Մոսկվայի թիվ 5 միջնակարգը՝ ոսկե մեդալով եւ 2015 թվականին գերազանցության ատեստատով ընդունվեց Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը՝ գերազանց առաջադիմությամբ:

Պատանի ուսանողի համար սկսվեց ուսման նոր գործընթաց, ավելի պատասխանատու, ավելի շատ ուժ ու կորով ներդնելու մի շրջան, երբ ամեն ինչ կապված է գիտելիքների աշխարհին խորանալու, ուսման ավելի բարձր գործընթաց շարունակելու հետ:

Տարիները հաջորդում էին, եւ Սարգիսը ավելի ու ավելի էր հարստացնում իր գիտելիքների պաշարը: Առաջադիմությունը միայն գերազանց գնահատականներն էին, բացառապես գերազանց գնահատականներ էին գրվում մեր երիտասարդի ազգանվան դիմաց:

Ահա մի դրվագ. դիպլոմային աշխատանքի պաշտպանության ժամանակ պետական քննական հանձնաժողովը եւ ողջ դահլիճը հոտնկայս ծափահարում էին, երբ բարձրախոսը հայտարարեց, որ Սարգիս Դուրգարյանը արժանացել է Լոմոնոսովի անվան համալսարանի Կարմիր դիպլոմի եւ ոսկե մեդալի:

Դա Դուրգարյանի համար յուրատեսակ աստեղային ժամի սկիզբը դարձավ՝ գիտության խորքերը քայլելու ճանապարհին:

Ուսանողի պապն էլ էր ներկա այդ արարողությանը եւ տեսնել էր պետք, թե ինչպես է լուռ արտասվում: Դա ուրախության եւ հպարտության պահ էր դպրոցի տնօրենի համար, երբ ինքն էլ իր հերթին հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ է կյանք ճանապարհել:

Սարգիս Դուրգարյան-կրտսերի համար ուսումը դեռեւս ավարտված չէ: Նա շարունակում է ուսանել նույն համալսարանի մագիստրատուրայում:

Երեւի, դա եզակի երեւույթ է, ինչու չէ, նաեւ աշխարհի համար:

Մեզ մնում է՝ երիտասարդ ուսանողին իր հայրենի Գանձայում ցանկանալ նորանոր հաջողություններ՝ դեպի գիտության բարձունքները քայլելու եւ իր երազանքներին հասնելու ճանապարհին:

***ՍՎԵՏԼԱՆԱ ԻԳԻԹՅԱՆ, ՎԱՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆ***

***Գանձայի Ռուսթավելու անվան դպրոցի մանկավարժներ***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

***Վերջերս հրապարակվել էր աշխարհի բնակչության թվաքանակի վիճակագրությունը, ըստ որի, բնակիչների թիվն անընդհատ աճում է: Հետաքրքիր է՝ այդ ֆոնի վրա ինչպե՞ս է ներկայացված Վրաստանը:***



***Ս.Միրզոյան Աբասթումանի***

Իրոք, վիճակագրության համաձայն, աշխարհի բնակչության թվաքանակը 2019 թվականին կազմել է 7,7 միլիարդ, իսկ մինչեւ 2050 թվականը կհասնի 9,7 միլիարդի:

Բնակչության թվաքանակի աճն ուղեկցվում է նրա ծերացմամբ, ծնելիության մակարդակի նվազմամբ, ինչպես նաեւ՝ սրընթաց ուրբանիզացիայով:

Իսկ ինչ վերաբերում է Վրաստանին, ապա, վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ 2019 թվականի հունվարի 1-ի տվյալներով, Վրաստանի բնակչությունը կազմել է 3 մլն 723 հազար 500 մարդ, ինչը 0,2 տոկոսով պակաս է, քան նախորդ տարում: Ըստ գերատեսչության տվյալների, 2018 թվականին գրանցվել է դրական բնական աճ (4614) եւ բացասական միգրացիոն սալդո (-10783): 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ Վրաստանի բնակչության 58,7 տոկոսն ապրում էր քաղաքային բնակավայրերում:

Դրա հետ մեկտեղ, Թբիլիսիի բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության գրեթե մեկ երրորդը: Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ 0-ից մինչեւ 14 տարեկան բնակչության բաժինը կազմում է բնակչության ընդհանուր թվաքանակի 20,3 տոկոսը, աշխատունակ տարիքի (15-ից մինչեւ 64 տարիքային խումբ) ակտիվ բնակչության բաժինը՝ 64,9 տոկոս, իսկ 65 եւ ավելի բարձր տարիքի մարդկանց բաժինը կազմում է 14,8 տոկոս: Դրա հետ մեկտեղ, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ, տղամարդկանց թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, գործնականում չի փոխվել եւ հասել է 1 մլն 790,9 հազարի, իսկ կանանց թիվը նվազել է 0,3 տոկոսով՝ մինչեւ 1 մլն 932,6 հազար: Վրաստանի բնակչության 48 տոկոսը կազմում են տղամարդիկ, իսկ 52 տոկոսը՝ կանայք:

Ինչպես նշվեց, բնակչության թվաքանակության նվազեցման վրա նշանակալի ազդեցություն է գործում միգրացիան: Վիճակագրության ծառայության տվյալներով, 2018թ. արտագաղթյալների թիվը կազմել է 98 935 մարդ եւ անցյալ տարվա համեմատ աճել է 15,8%-ով: Ներգաղթյալների թիվը նույնպես աճել է 5,9%-ով եւ կազմել 88 152 քաղաքացի:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն, նույն ժամանակահատվածում, արտագաղթյալների 86,6%-ը եւ ներգաղթյալների 84,5%-ը եղել են աշխատունակ տարիքի անձինք (15-64 տարեկան):

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ՄԱՀՎԱՆ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՊԱՏՃԱՌԸ

***Սան-Պաուլուի (Բրազիլիա) պետական համալսարանի գիտնականները պարզել են, որ այն մարդկանց մոտ, որոնք բաց են թողնում նախաճաշը եւ ուտում են քնելուց առաջ, մեծանում է սրտի տագնապից մահվան ռիսկը:***



Հետազոտությանը մասնակցել է միջինը 60 տարեկան 113 պացիենտ, որոնց ախտորոշել էին սրտամկանի ինֆարկտ՝ էլեկտրակարդիոգրամայի ST սեգմենտի (STEMI) աճով: Նրանք մասնակցել են հարցման, որի ընթացքում նշել են՝ նախաճաշե՞լ են իրենք, արդյոք, առավոտյան եւ կերե՞լ են, արդյոք, ուշ երեկոյան (քնելուց երկու ժամ առաջ): Նախաճաշը բաց է թողել կամավորների 58 տոկոսը, ուշ է ընթրել 51 տոկոսը, իսկ երկու սովորությունն էլ դիտվել են 41 տոկոսի մոտ:

Պարզվել է, որ, սնվելու երկու առանձնահատկությամբ մարդկանց մոտ, մահվան, կրկնակի ինֆարկտի եւ ստենոկարդիայի ռիսկը 4-5 անգամ ավելի մեծ է եղել հիվանդանոցից դուրս գրվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Գիտնականների խոսքով՝ STEMI-ով յուրաքանչյուր հինգերորդ պացիենտը մահանում է մեկ տարվա ընթացքում, ուստի ճիշտ սնվելն արդյունավետ միջոց է հիվանդի հետագա վիճակի կանխատեսման բարելավման համար: Կերակուր ընդունելու եւ քնելու միջեւ ընդմիջումը պետք է լինի առնվազն երկու ժամ, իսկ նախաճաշը պետք է բաղկացած լինի կաթնամթերքից, ածխաջրերից ու մրգերից եւ կազմի կալորիաների ընդհանուր քանակի 15-35 տոկոսը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉՊԵՍ ՍԱՆՁԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ

***Ինչո՞ւ ոմանք հասցնում են ամեն ինչ, իսկ մյուսները՝ ոչինչ: Ժամանակն ու այն օգտագործելու ունակությունը ժամանակակից աշխարհի հրամայականն է դարձել: Մասնագետները փորձում են պարզել, թե ինչո՞ւ են ոմանք հասցնում ամեն ինչ, իսկ մնացածների ժամանակը չի հերիքում ոչ մի բանի:***

***Ստորեւ ներկայացնում ենք հոգեբանի խորհուրդները՝ ժամանակի կառավարման տեսանկյունից:***

**Աշխատանքային ժամանակի կառավարում**

**1. Մի' կորցրեք կենտրոնացումը**

Օրը քանի՞ անգամ եք ձեր էլեկտրոնային փոստը ստուգում: Եթե դա անում եք ժամը մեկ, ապա՝ իմացեք, որ օրվա ընթացքում կորցնում եք 1 ժամ. պարզվում է, որ մի զբաղմունքից մյուսին անցնելը նվազագույնը 4 րոպե կենտրոնացում է պահանջում: «Inbox Detox» գրքի հեղինակ Մարշա Իգանը մի ամբողջ հայեցակարգ է մշակել էլեկտրոնային փոստի հետ աշխատանքի վերաբերյալ: Նա խորհուրդ է տալիս՝ օրվա ընթացքում այն ստուգել 5 անգամ:



Պարզ է, որ խոսքն այն դեպքերի մասին չէ, երբ գործնական նամակագրություն է գնում, որը ձեզնից անհապաղ պատասխան է պահանջում:

Մի խոսքով, երբ դուք սկսում եք մի գործով զբաղվել, ոչ մի դեպքում մի անցեք մյուսին, օրինակ՝ փոստը մի' ստուգեք եւ սոցցանցեր մի' մտեք: Որքան հնարավոր է կենտրոնացեք:

**2. Մի' եղեք ծանծրալի պերֆեկցիոնիստ**

Եթե մի քանի անգամ վերադառնում եք նույն աշխատանքին՝ ձգտելով հասնել կատարելության, ինչը, ինչպես հայտնի է, այս աշխարհում հնարավոր չէ, իմացեք, որ նման մոտեցումը կարգելափակի ձեր մասնագիտական աճը: Հոգեբաններն ապացուցում են, որ պերֆեկցիոնիստները նույնպես խախտում են վերջնաժամկետը, ինչպես՝ ծույլերը: Պատկերացրեք, որ սովորական հաշվետվություն եք գրում ձեր կազմակերպության կողմից անցկացված հերթական միջոցառման մասին: Հաշվետվությունը գրեցիք 3 ժամ 25 րոպեում: Սակայն, երբ վերընթերցեցիք, որոշեցիք, որ սկիզբը կարելի էր ավելի գեղեցիկ գրել: Ամբողջ տեքստը ոտքից գլուխ շուռ եք տալիս եւ դրա վրա ծախսում եւս 2 ժամ: Հետո ձեզ թվում է, թե ավելի լավ կլիներ, եթե ձեր հաշվետվությունում այլ երկրների օրինակներ լինեին. դա եւս երկու ժամ է խլում:

Պերֆեկցիոնիստի գործը երբեք չի ավարտվում: Իսկ վերջնաժամկետը մոտենում է: Այսպես, ցանկացած աշխատանքի սկզբում հստակ պլան կազմեք, որից չեք շեղվելու: Հստակ խնդիր դրեք ձեր առջեւ՝ գրել հաշվետվությունը 4 ժամվա ընթացքում, եւ երբեք մի խախտեք այդ վերջնաժամկետը:

**3. Սովորե'ք ճիշտ բաշխել աշխատանքը**

Ժամանակի կառավարման մասնագետներն ասում են, որ վատն է այն ղեկավարը, ով չի կարողանում ճիշտ բաշխել աշխատանքը, եւ նրա թիմը երբեք ոչնչի չի հասնում:

Պետք է ճիշտ որոշել առաջնահերթություններն ու հրաժարվել այն աշխատանքից, որը կարող են մնացածն անել: Դա ամենեւին չի նշանակում, որ ամեն ինչ պետք է գործընկերներին հանձնարարել: Պարզապես հիշեք՝ թիմի անդամներն ու ենթակաները հենց նրա համար են, որ դուք կարողանաք աշխատանքը բաժանել:

**4. Օրը սկսեք ամենաբարդ գործից**

Ժամանակի կառավարման փորձագետների մեծ մասն այն կարծիքին է, որ եթե դուք առավոտյան կատարեք այն աշխատանքը, որը հատկապես ծուլացել եք անել եւ ցանկացել եք թողնել վաղվան, ապա ամբողջ օրը արդյունավետ ու բեղուն կլինի: Եթե ամենաբարդ աշխատանքն անեք օրվա առաջին կեսին, օրվա մնացած հատվածում հպարտ կլինեք, կթեւավորվեք, ցանկացած աշխատանք ձեզ թեթեւ ու հաճելի կթվա:

**5. Խուսափե'ք շատախոս գործընկերներից**

Վերանայեք ձեր աշխատանքային օրը եւ անկեղծ խոստովանեք՝ որքան ժամանակ եք ծախսում գործընկերների հետ զրույցների վրա: Հավանաբար՝ 40 տոկոս, եթե ոչ ավելի... Սակայն հետո մի բողոքեք, որ ուշ եք ավարտում աշխատանքը: Այն փաստարկը, որ գործընկերներն իրենք են գալիս, ինչ-որ բան հարցնում եւ այլն, անընդունելի է: Ես անձամբ օգտվում եմ գործընկերներից փրկվելու հասարակ մեթոդից. ականջակալներ եմ օգտագործում, եւ նրանք կարծում են, որ ես ինչ-որ բան եմ լսում, եւ զրույցի չեն բռնվում:

**6. Սահմանափակե'ք սոցցանցերում անցկացրած ժամանակը**

Օ... Ահա եւ հասանք մեր ժամանակների ամենաանխիղճ թշնամուն... Շատ չեմ խոսի այս թեմայով, պարզապես վիճակագրություն կնշեմ. միջինում մարդն օրական սոցցանցերում մոտ 6 ժամ է անցկացնում, եւ այդ ժամանակի մեծ մասը բաժին է ընկնում աշխատանքային ժամերին: Սա միջինում, սակայն ոմանց համար 6 ժամը ժամանակ չէ: Իսկ 6 ժամում կարելի է ոչ միայն հաշվետվություն, այլ նույնիսկ՝ գրական գլուխգործոց գրել: Այդ պատճառով էլ հիմա մտեք ֆեյսբուք եւ անհապաղ ջնջեք՝ «Նույնիսկ հանդիպման գնալու ժամանակ չունեմ» գրառումը:

**(Շարունակելի)**

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ

*☺ Մեկը հյուր է գնում մանկության ընկերուհուն, որն ամուսնացել էր մի մեծահարուստի հետ: Տեսնելով նրա ամուսնուն,՝ ականջին շշնջում է.*

*- Ինչպե՞ս ես ամուսնացել այս հիվանդի հետ, ախր նա ոչ միայն շլդիկ է, այլեւ կաղում է ու կակազում:*

*- Կարող ես բարձր խոսել. նա նաեւ չի լսում...*

*☺ - Շնորհավորում եմ, կնոջդ հետ բարիշել ես:*

*- Ինչի՞ց եզրակացրեցիր:*

*- Ախր ես երեկ տեսա՝ ինչ հանգիստ ու համերաշխ փայտ էիք սղոցում:*

*- Դմբո: Մենք կահույքն էինք կիսում:*

*☺ - Բժիշկ, իմ ամուսինը շա՜տ լուրջ հոգեկան խանգարում ունի: Ես երբեմն իրեն ժամերով որեւէ բան եմ պատմում, իսկ վերջում պարզվում է, որ նա ոչինչ չի լսել:*

*- Ո'չ, հարգելիս, դա հիվանդություն չէ: Դա Աստծո պարգեւ է:*

*☺ Ով ասաց, որ ծխախոտը չի ազդում կնոջ ձայնի վրա. փորձեք նստած, կնոջ ներկայությամբ թափ տալ մոխիրը խալու վրա:*

*☺ - Ինչո՞ւ ես դու թողնում կնոջդ ծխել:*

*- Դե գոնե մի անգամ պիտի լռի՞, թե՞ չէ:*

*☺ Հայրիկը փոքրիկ աղջկա համար կարդում է Բարմալեյի հեքիաթը: Շատ լավ է կարդում, առոգանությամբ, ոգեւորված: Աղջիկը երկար ժամանակ լսում է ու հարցնում:*

*- Պապ, իսկ էդտեղ հենց ըտենց վախենալու ձայնո՞վ ա գրած:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՊԵՏՔ Է ՍՏԵՂԾԵՆՔ ՌԵԱԼ ԿԱՊԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը` 1-ին էջում)

Հայաստանի վարչապետը մասնավորապես նշեց, որ հունիսին նախատեսված է անցկացնել հայ-վրացական միջկառավարական խորհրդի նիստ:

- Նիստը պետք է տեղի ունենար մայիսին, սակայն, մեր վրաց գործընկերների խնդրանքով, հետաձգվել է, նաեւ գործարար համաժողով պիտի լինի: Սակայն, մինչ այդ, ես խնդիր եմ դրել, որ Բագրատաշենից Երեւան եկող երկու ավտոճանապարհները լինեն ամենաբարձր որակի, որովհետեւ այդ ճանապարհը պետք է նորմալ լինի, որպեսզի այդ առեւտրաշրջանառությունը ստացվի: Կարեւոր է նաեւ երկաթուղային հաղորդակցության որակը, Հարավկովկասյան երկաթուղու մեր գործընկերների հետ քննարկում ենք, որ սակագնային քաղաքականությունը, երկաթուղային հաղորդակցության որակը լինի բավարար չափով, պետք է ստեղծենք դաշտ, որպեսզի գործարարները այդ ռեալ կապերը ստեղծելու հնարավորություն ունենան, եւ մենք աշխատում ենք,- ասաց Փաշինյանը` նշելով, որ առեւտրաշրջանառության բարձրացման նախորդ անհաջող մոդելը, երբ վարչապետը, փոխվարչապետը ներքաշել են իրենց հարմար կազմակերպություններին, այլեւս չի լինելու եւ չեն աշխատելու այդ մեխանիզմներով:

## ԸՆԴԳԾՎԵԾ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մայիսի 14-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, աշխատանքային այցով գտնվում էր Չինաստանում:*



Պեկինի օդանավակայանում Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին Չինաստանի կոմկուսի Կենտրոնի քարոզչության բաժնի փոխնախարար Գուո Ջեյմինը, պաշտոնական այլ անձինք:

Այցի շրջանակում, Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի, ՉԺՀ պետական խորհրդի նախագահի (վարչապետ) Լի Քեցյանի հետ: Հանդիպումներին քննարկվեցին հայ-չինական հարաբերությունների հետագա զարգացմանն ուղղված հարցեր:

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետը Պեկինում մասնակցեց եւ ելույթ ունեցավ Ասիական քաղաքակրթությունների երկխոսության համաժողովին:

Նաեւ Հայաստանի վարչապետը, տիկնոջ` Աննա Հակոբյանի հետ, ներկա գտնվեց համաժողովի գալա համերգին, որն անցկացվեց Պեկինի Ազգային օլիմպիական մարզադաշտում: Համերգի ընթացքում ելույթով հանդես եկավ Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթը:

## ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՌ ՕՐԻՆԱԿ

*Մայիսի 16-ին, աշխատանքային այցով Ղազախստանում գտնվող` Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպեց երկրի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ:*



Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը շնորհակալություն հայտնեց նախագահ Սարգսյանին` իր հրավերն ընդունելու եւ տնտեսական 12-րդ ամենամյա ֆորումին մասնակցելու համար, որն այս տարի անցկացվում է «Ոգեշնչող աճ. մարդիկ, քաղաքներ, տնտեսություններ» խորագրի ներքո:

Հանդիպմանը Հայաստանի եւ Ղազախստանի նախագահներն անդրադարձան երկու երկրների միջեւ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ` Եվրասիական տնտեսական միության եւ ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության հարցերին: Կարեւորվել է առեւտրատնտեսական, մշակութային եւ հումանիտար ոլորտներում գործակցության խորացումը:

Նախագահները առանձնահատուկ ընդգծեցին Ղազախստանի հայ համայնքի դերը` երկու երկրների միջեւ պատմականորեն ձեւավորված բարեկամական հարաբերությունների պահպանման ու զարգացման տեսանկյունից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ` ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

### ԿԱՅԱՑԱՎ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ - Հ.ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, կառավարական պատվիրակության հետ միասին, Բրյուսելում մասնակցեց Արեւելյան գործընկերության տասնամյակին նվիրված միջոցառումներին: Մասնավորապես, Հայաստանի վարչապետը, Արեւելյան գործընկերության անդամ երկրների ղեկավարների հետ, մասնակցել է Արեւելյան գործընկերության տասնամյակին նվիրված պաշտոնական ընթրիքին, որը տրվել է Դոնալդ Տուսկի անունից:*

Ընթրիքին ներկա են եղել նաեւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին, Եվրոպական հանձնաժողովի հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով հանձնակատար Յոհաննես Հանը, Լեհաստանի եւ Շվեդիայի նախկին արտգործնախարարներ Ռադոսլավ Սիկորսկին եւ Կառլ Բիլդտը, ովքեր Արեւելյան գործընկերության նախաձեռնողներից են:

Բրյուսելում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատեւ հանդիպում է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

- Ես վստահ եմ, որ բանակցային գործընթացը կշարունակվի, եւ հիմա շատ կարեւոր է Լեռնային Ղարաբաղը վերադարձնել բանակցային սեղան: Անհնար է հասնել այս հակամարտության կարգավորմանն առանց Ղարաբաղի,- հանդիպման ավարտից հետո հայտարարեց Հայաստանի վարչապետը:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ 20 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ԾՐԱԳՐԵՐ

*Եվրոպական միության հետ վերջնական համաձայնեցման փուլում է գտնվում Հայաստան-Եվրամիություն համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը, որը ներառում է արդարադատության, տրանսպորտի, էներգետիկայի, շրջակա միջավայրի, սպառողների շահերի պաշտպանության, միգրացիայի եւ այլ ոլորտների 205 միջոցառում:*

Մայիսի 8-ին, լրագրողների հետ հանդիպմանը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ ԵՄ-ը գոհունակություն է հայտնել ճանապարհային քարտեզի նախագծի վերաբերյալ` որպես համաձայնագրի իրականացման համար լավ մեկնակետ:

- ՀՀ-ԵՄ համագործակցության շրջանակներում, ԵՄ-ի 2017թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո, ստորագրվել է 3 համաձայնագիր` կրթության, արդարադատության եւ տնտեսական հարաբերություններին առնչվող ոլորտներում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 34,5 մլն եվրո: ՀՀ-ԵՄ համագործակցության շրջանակներում, ԵՄ-ի 2018թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո, ստորագրվել է 2 համաձայնագիր` ժողովրդավարության ամրապնդման եւ տարածքային զարգացմանն առնչվող ոլորտներում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 36 մլն եվրո: Եվս 20 միլիոն եվրոյի ծրագրեր քննարկման փուլում են,- ասաց վարչապետը:

## ՄՇԱԿՎԵԼ Է ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*Հայաստանի կառավարության միջգերատեսչական հանձնաժողովը Հայաստանում գործազրկության մակարդակի նվազեցման ծրագիր է մշակել: Նշենք, որ, 2018թ. վերջի դրությամբ, գործազրկությունը Հայաստանում կազմում է մոտ 20 տոկոս:*

*Միջգերատեսչական մեր հանձնաժողովը մշակել է մի ծրագիր, որը հենված է երեք հիմնասյուների վրա: Առաջինը մարդկային կապիտալի զարգացումն է, երկրորդը` զբաղվածության խթանումը, երրորդն ինստիտուցիոնալ բարեփոխումներն են: Այս երեք ուղղություններով էլ շատ կոնկրետ թիրախներ եւ ժամանակացույց է սահմանվելու:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ` ՀԱԱԳԱՅԻ ԳԻՆՈՒ ՓԱՌԱՏՈՆԻՆ

*Հաագայի Crown Plaza Promenade հյուրանոցային համալիրում տեղի է ունեցել Dimplomat Magazine-ի կողմից կազմակերպված ամենամյա Diplomats Wine Extravaganza փառատոնը, որին առաջին անգամ ներկայացված է եղել Հայաստանը` ի դեմս Royal Beverages Group ընկերության կողմից ներմուծվող հայկական արտադրության գինու, կոնյակի եւ օղու լայն տեսականու:*

*Փառատոնի այցելուները դրական են գնահատել հայկական ալկոհոլային արտադրանքը` ընդգծելով, որ ներկայացված երկրներից Հայաստանն առանձնանում էր իր հարուստ տեսականիով, բարձր մակարդակի պատրաստվածությամբ եւ յուրօրինակ դիզայնով:*

*Diplomats Wine Extravaganza փառատոնին մասնակցել են ալկոհոլի ներմուծմամբ զբաղվող մի շարք ընկերություններ, սոմելիեներ, հյուրանոցային եւ ռեստորանային ցանցերի ներկայացուցիչներ:*

## ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԵԾ ԵՐԵՎԱՆԻ 2800-ԱՄՅԱԿԻ ԱՅԳԻՆ



*Երեւանի քաղաքապետարանի հարակից տարածքում գտնվող Երեւանի 2800-ամյակի այգին արդեն բաց է քաղաքացիների ու զբոսաշրջիկների համար: «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցված այգու առաջին այցելուներն էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանը, բարերարներ Միքայել եւ Կարեն Վարդանյաններն ու այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:*

*Միքայել եւ Կարեն Վարդանյանների կողմից գլխավոր նախապայմանն այն է, որ այգին մնում է Երեւան համայնքի սեփականությունը, եւ այգու տարածքում արգելվում է որեւէ ձեռնարկատիրական գործունեություն: Այգու կառուցապատումից բացի, «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամը, 2019թ. սկսած, 99 տարիների ընթացքում, իր միջոցների հաշվին հոգալու է նաեւ այգու խնամքի ու պահպանության ծախսերը:*

ԱՎԱՆԴԱԿԱՆ



## 105-ՐԴ ՎԱՐԴԱՏՈՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ

Վաղը՝ մայիսի 19-ին, կանցկացվի վրաց ու հայ ժողովուրդների դարավոր բարեկամության խորհրդանիշ Սայաթ-Նովային նվիրված Վարդատոնը:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, ժամը 10:30-ին կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ: Այնուհետեւ եկեղեցու գավթում, ծաղիկներ կխոնարհվեն Սայաթ-Նովայի շիրմին: Ապա՝ եկեղեցու հարակից՝ Վախթանգ Գորգասալիի հրապարակում, կկայանա Վարդատոնի ավանդական տոնախմբության բացման պաշտոնական արարողությունը, որին կհաջորդի գրական-գեղարվեստական մասը:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2019»

## ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉԸ ԱՌԱՆՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ

***Իսրայելի մայրաքաղաք Թել Ավիվում, մայիսի 14-ին եւ 16-ին անցկացվեցին «Եվրատեսիլ-2019» երգի միջազգային մրցույթի առաջին եւ երկրորդ կիսաեզրափակիչները: Ցավոք, Վրաստանը ներկայացնող Օթո Նեմսաձեն եւ Հայաստանի ներկայացուցիչ Սրբուհի Սարգսյանը չկարողացան հաղթահարել կիսաեզրափակիչի արգելքը եւ դուրս մնացին մրցույթից:***

Մրցույթի առաջին կիսաեզրափակիչին մասնակից 17 երկրներից (այդ թվում՝ Վրաստանից) եզրափակիչի ուղեգրեր նվաճեցին Հունաստանի, Բելառուսի, Սերբիայի, Կիպրոսի, Էստոնիայի, Չեխիայի, Ավստրալիայի, Իսլանդիայի, Սան Մարինոյի եւ Սլովենիայի ներկայացուցիչները, իսկ երկրորդ կիսաեզրափակիչին մասնակից 18 երկրներից (այդ թվում՝ Հայաստանից) եզրափակիչում հանդես կգան Իռլանդիայի, Մոլդովայի, Շվեյցարիայի, Լատվիայի, Ռումինիայի, Դանիայի, Շվեդիայի, Ավստրիայի, Խորվաթիայի, Մալթայի, Լիտվայի, Ռուսաստանի, Ալբանիայի, Նորվեգիայի, Նիդերլանդների, Մակեդոնիայի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները:

Մրցույթի կանոնների համաձայն, որպես հիմնադիր «Մեծ հնգյակ», Իսրայելի, Ֆրանսիայի, Իսպանիայի, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի եւ Իտալիայի ներկայացուցիչները եզրափակիչ են անցնում ինքնաբերաբար. Իսրայելը՝ որպես անցած տարվա մրցույթի հաղթող երկիր:

Եզրափակիչ փուլը տեղի կունենա մայիսի 18-ին:

ԺԱՄԱՆՑԻ ՎԱՅՐ



## ՆՈՐԱՑՎԱԾ ԱՅԳԻ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

***Մայիսի 15-ին, Թբիլիսիում, մեծ հանդիսավորությամբ բացվեց Վասո Գոձիաշվիլու անվան այգին:***

Թբիլիսիի նախկին Կարմիր այգին վերականգնվել է եւ վերանվանվել՝ Վասո Գոձիաշվիլու անունով: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր նաեւ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն: Իսկ համերգի հատուկ հյուրն էր Նանի Բրեգվաձեն:

Թբիլիսիի քաղաքապետարանի տեղեկատվությամբ՝ այգու վերականգնման ու բարելավման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է մոտ 2,5 միլիոն լարի:

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

## ՄԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՉԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ



Կյանքի 62-րդ տարում վախճանվեց մանրաքանդակի վաստակաշատ վարպետ, թբիլիսաբնակ Խաչատուր Խոստարյանը:

Խաչատուրը ավարտել է Թբիլիսիի Յակոբ Նիկոլաձեի անվան գեղարվեստի ուսումնարանը: 2009 թվականից՝ Վրաստանի նկարիչների միության, իսկ 2014-ից Վրաստանի հայ նկարիչների միության անդամ էր: Երկար տարիներ Խաչատուրը զբաղեցրեց Թբիլիսիի ոչ կառավարական կազմակերպության՝ Նիկո Փիրոսմանու ասոցիացիայի նախագահի տեղակալի պաշտոնը: Նա սիրում էր զբաղվել նաեւ գրականությամբ. գրում էր բանաստեղծություններ ու հեքիաթներ, որոնք, ի դեպ, կարդում էր միայն մտերիմներին...

Խաչատուրի ստեղծագործությունների անձնական ցուցահանդեսը՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում, բացվեց հինգ տարի առաջ՝ 2014 թվականին: Այդ օրը Կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան պատկերասրահում Խաչատուրը ուրախությամբ եւ հպարտությամբ ցուցադրում էր, շատերի համար մինչ այդ անծանոթ, իր հիասքանչ մանրաքանդակները՝ արծաթյա, ոսկեջրած պատվանդաններով: Ծովափնյա այդ փոքր խեցիների վրա, մանրակրկիտ մանրամասնություններով, փորագրված էին Վրաստանի հայտնի գրողների, բանաստեղծների դիմանկարները, բնանկարներ եւ տարբեր նկարչական հորինվածքներ:

Ցուցահանդեսի ողջ ընթացքում, Խաչատուրի գործերը դիտելիս, ինձ չէր լքում միտքը, թե ինչ տիտանիկ համբերությամբ, նվիրվածությամբ, քրտնաջան աշխատասիրությամբ է օժտված դրանք ստեղծած հեղինակը: Իմ այս մտքերը, Խաչատուրի հոգեհացի սեղանին, բարձրաձայնեցին նաեւ նրա գործընկերները՝ վրացական կիրառական արվեստի հայտնի գործիչները:

Մանրաքանդակի վարպետի գործերը ցուցադրվել են նաեւ մայրաքաղաքի՝ Ն.Փիրոսմանու տուն-թանգարանում՝ վրաց ու վիրահայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչների մասնակցությամբ:

Խաչատուրի մասին հոդվածներ են գրվել մեր՝ «Վրաստան» թերթում: 2019 թվականի փետրվարին, Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված հոբելյանի շրջանակներում, Վիրահայոց թեմի խնդրանքով, Խաչատուրը՝ արդեն ծանր հիվանդ, ստեղծեց մեծ գրողի դիմանկարը պատկերող հուշամեդալը, որի էսքիզը, ձուլումը, ամբողջական ձեւավորումն իրականացրել էր ինքը:

Նա արդեն վերջացնում էր նաեւ Մեծն Կոմիտասին նվիրված հուշամեդալի էսքիզը, արդեն պատրաստվում էր Ֆրանսիայում ցուցադրվելիք անձնական ցուցահանդեսին. ավաղ, վրա հասավ վաղաժամ վախճանը... Անկատար մնացին երազանքները, ընդհատվեց տաղանդավոր արվեստագետի արարումներով իմաստավորված կյանքը...

***ՄԵՐՈՒԺԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ***
*Գեղանկարիչ*



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ուժ, եռանդ, ներուժ: 4.Ռուս մեծ գրող, Հովհ.Թումանյանի մեծ բարեկամը Վալերի ...: 9.Ե.Չարենցի ստեղծագործություններից՝ «Լենինն ու ...ն»: 11.Գրական ստեղծագործության տեսակ: 12.Տեխնիկայի խանութ Թբիլիսիում: 13.Հերոս «Մեր գյուղը» ֆիլմում: 14.Անկյան տեսակ: 15.Տարվա եղանակ: 17.Ցուցական դերանուն: 18.Հայերենի ժխտական նախածանց: 19.Գիքորի քույրը: 21.Հարավային Կորեայի մայրաքաղաքը: 22.Փոքրացուցիչ վերջածանց: 23.«Ոճիր եւ ...» Մ.Դոստոեւսկու ստեղծագործություններից: 26.Հովերեղբայրը Լոռիում: 28.Ձեռնափայտ, գավազան: 30.Անձնական դերանուն: 31.Չինաստանի դրամական միավորը: 33.Բուսատեսակ: 35.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 36.Հացահատիկի աման: 38.«..., որդիս, պատգամ որպես» (Սիլվա Կապուտիկյան): 39.Վարդանանց հերոսներից: 41.Սիրասուն ծնող: 43.Քաղաք Ռուսաստանում: 44.Անառիկ, չգրավվող: 47.Իսպանացի հայտնի նկարիչ: 48.Ժողովրդական ...-երաժշտություն: 49.Ռուս հանրահայտ գրող: 52.Ստեղծել, կերտել: 53.Մրգի տեսակ: 56.Լեհ գրող, ում արձանը կանգնեցված է Վիլնյուսում (անունը): 59.Հարավամերիկյան պետություն: 60.Հայկական մշակութային կենտրոն Արցախում: 61.Երկրաշարժից ավերված գյուղ Մասիսի լանջին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Չափ ու քանակի մակբայ: 3.Ռուսաստանյան հայտնի քաղաք: 4.Ամենախոր լիճը: 5.Խոշոր գետ Չինաստանում: 6.Այծի ձագը: 7.Լեռ Պատմական Հայաստանում: 8.Հայկական ժողովրդական երգ «Աղջի ..., յարիդ տարան»: 10.Խորհրդային ռուս երգիչ Մարկ ...: 12.Գյուղ Հայաստանի Շիրակի մարզում: 16.Ֆիլմ Վ.Կիկաբիձեի եւ Մ.Մկրտչյանի մասնակցությամբ: 20.Վրաց մեծ գրող ... Ծերեթելի: 24.Հայոց մայրության եւ պտղաբերության աստվածուհին: 25.Հին հայկական ապրիլ ամիսը: 27.Հանրահայտ լուսանկարիչ Թուրքիայում, որին անվանում էին «Ստամբուլի աչք»: 28.«Աչքերի առաջ ...ը պատեց» (Հովհ.Թումանյանի «Անուշ»): 29.Մայր երակը: 32.Պետություն Հյուսիսային Եվրոպայում: 33.Հանքային հանածո: 34.Եկեղեցական համալիր Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանին՝ Դավիթ ...: 37.Օժանդակ բայ: 40.Հայկական գինի: 42.Ուսումնական հաստատություն, կաճառ: 45.Ֆրանսիացի գրող, դրամատուրգ, երաժշտագետ Ռոմեն ...: 46.Քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 50.Ռափայել Պատկանյանի կեղծանունը ... Քաթիպա: 51.Արմեն Տիգրանյանի հանրահռչակ օպերան: 54.Ֆրանսիացի հայտնի նկարչուհի: 55.Ջրային տարածք: 57.Ձայնանիշ: 58.Անորոշ դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Տոլմա: 8.Ամենա: 10.Արամ: 11.Տան: 13.Բադրի: 14.Մարտունի: 16.Մալի: 17.Հոր: 18.Տավիդ: 20.Դաթա: 21.Լոկ: 22.Շտապ: 26.Ալավ: 28.Բագին: 31.Լիր: 32.Կոպ: 34.Կանն: 35.Մարգո: 36.Ձայն: 38.Դիք: 41.Հաստ: 43.Սրբուհի: 45.Օղակ: 48.Քիթ: 49.Թարմ: 52.Եմիշ: 53.Կառ: 54.Լուս: 55.Ակին: 56.Թոք: 57.Խաշու: 58.Դող: 59.Վան: 60.Նոր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մոռանալ: 2.Լարի: 3.Գամմա: 4.Բերրի: 5.Պատուհան: 7.Մարտիկ: 9.Անիրավ: 12.Անոթ: 15.Ալբալի: 19.Վոլգա: 23.Տալոն: 24.Պարմա: 25.Աննա: 27.Մոգ: 29.Ակահ: 30.Ինձ: 32.Կրիա: 33.Պորտ: 37.Յորք: 39.Քղամիդ: 40.Մութաքա: 41.Հիթ: 42.Սիրուշո: 44.Բիկով: 46.Ղեկ: 47.Կինո: 50.Ալան: 51.Մսուր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445